

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 9

2013թ. հունիսի 15-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտխորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 25-ը:

Օրակարգ`

1. ՀՈՒՖ 2012-2013 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքների և զարգացման հայեցակարգային դրույթների իրականացման հաշվետվություն:

/զեկ` պրոռեկտոր Ն.Ա.Կուտուզյան/

2. ԲՖ 2012-2013 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի արդյունքների և զարգացման հայեցակարգային դրույթների իրականացման հաշվետվություն:

/զեկ` ԲՖ դեկան Վ.Լ.Կատվայան/

3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց հեռակա ուսուցման ֆակուլտետի 2012-2013 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Զեկուցողն անդրադարձավ ֆակուլտետի առանձին բաժինների առաջադիմության ցուցանիշներին, ուսանողների դրսևորած գիտելիքների որակին ու մակարդակին, հանձնաժողովների նախագահների և անդամների արտահայտած կարծիքներին: Միշտ չէ, որ ուսանողների պատասխանները եղել են գոհացուցիչ, չնայած մեծ մասամբ հանձնաժողովները դրական են արտահայտվել գործընթացի մասին: Ամփոփիչ ատեստավորման ընթացքը բացահայտել է նաև թերություններ, որոնք էական ազդեցություններ չեն կարող թողնել ընդհանրապես ուսուցման գործընթացի վրա, և հեշտորեն կարելի է դրանք շտկել: Ն.Կուտուզյանը խոսեց նաև ֆակուլտետի զարգացման հայեցակարգային դրույթների իրագործման ընթացքի և հեռանկարների մասին, նշեց, որ ամեն ինչ արվում է հեռակա ուսուցման համակարգը կատարելագործելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ապահովել բուհի բոլոր ստորաբաժանումների համատեղ աշխատանքը:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Վ.Կատվայանը ներկայացրեց ֆակուլտետի հաշվետվությունը տարեվերջյան ամփոփիչ ատեստավորման արդյունքների և

գարգացման ընթացքի վերաբերյալ Զեկուցողը ներկայացրեց հայոց լեզվի և գրականության, ռուսաց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության բաժինների շրջանավարտների ատեստավորման արդյունքները, ցուցաբերած առաջադիմությունը: Նա նշեց, որ ուսանողները հիմնական լավ էին նախապատրաստվել քննություններին: Շատ են եղել բարձր, բարձր ու լավ գնահատականներ ստացողները, իսկ վատ գնահատական ստացողներ ընդհանրապես չեն եղել: Դա նշանակում է, որ ուսանողների հետ տարված աշխատանքները եղել են արդյունավետ: Անդրադառնալով հանձնաժողովների արտահայտած կարծիքներին՝ Վ. Կատվայանը նշեց, որ բոլորն էլ ըստ էության բարձր են գնահատել քննությունների ընթացքն ու արդյունքները՝ նկատելով, որ որոշ դեպքերում, հատկապես ռուսաց լեզվի և անգլերենի, պետք է առավել ուշադրություն դարձնել հարցաշարերի գործնական ուղղվածությանը: Ինչ վերաբերում է ֆակուլտետի՝ ըստ հայեցակարգի գարգացմանը, ապա աշխատանքները տարվում են նորմալ հունով:

Նիստում արծարծված հարցերի շուրջ ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը:

Հիմք ընդունելով զեկուցումները՝

Որոշեցին՝

1. Ն. Կուտուբյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
2. Վ. Կատվայանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
3. Հաստատել <<Հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման և դրանց մասսայական իրազեկման կարգ>>-ը:

Գիտխորհրդի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ. Ա. Ասոյան